ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

«---» «----------» 2010թ. N ----- Ն

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2009 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 23-Ի N 56-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 16-րդ կետով, 75-րդ հոդվածով և «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 4-րդ կետով՝

Երևան քաղաքի ավագանին ***որոշում է.***

1. Երևան քաղաքի ավագանու 2009 թվականի դեկտեմբերի 23-ի «Երևան քաղաքի 2010 թվականի բյուջեի մասին» N 56-Ն որոշմամբ հաստատված.
   1) Եկամուտների գումարն ավելացնել՝ 239,455.3 հազ. դրամով,
   2) ծախսերի գումարն ավելացնել 239,455.3 հազ. դրամով:

2. Երևան քաղաքի ավագանու 2009 թվականի դեկտեմբերի 23-ի «Երևան քաղաքի 2010 թվականի բյուջեի մասին» N 56-Ն որոշման NN 1, 2, 3, 6 և 7 հավելվածներում կատարել փոփոխություններ՝ համաձայն համապատասխանաբար NN 1, 2, 3, 4 և 5 հավելվածների:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Գ. ԲԵԳԼԱՐՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ–ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2009 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 23-Ի N 56-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ՀՀ 2009 թվականի պետական բյուջեի Երևանի համաքաղաքային նշանակություն ծախսերի շրջանակներում <<Գնումների գործակալություն>> ՊՈԱԿ-ի և <<Գրիար>> ՓԲԸ-ի միջև 12.02.2009 թվականին կնքվել էր հ. ԱՇՁԲ 09/3 պայմանագիրը՝ Երևան քաղաքի կամրջային կառուցվածքների վերականգնման-ամրացման (Գ. Նժդեհի փողոցի ուղետար) աշխատանքների իրականացման համար: Պայմանագրի շրջանակներում <<Գրիար>> ՓԲԸ-ին վճարվել է 359,175.7 հազ. դրամ կանխավճար: <<Գրիար>> ՓԲԸ-ի կողմից կատարվել է 119,720.4 հազ. դրամի աշխատանքներ, որից հետո նախագծային փոփոխության անհրաժեշտությամբ պայմանավորված, <<Գնումների գործակալություն>> ՊՈԱԿ-ի և <<Գրիար>> ՓԲԸ-ի միջև կնքվել է համաձայնագիր պայմանագիրը լուծելու վերաբերյալ, համաձայն որի <<Գրիար>> ՓԲԸ-ին վճարված և չմարված 239,455.3 հազ. դրամ կանխավճարը պետք է վերադարձվեր ՀՀ պետական բյուջե մինչև 2010 թվականի հունիսի 1-ը:

Հաշվի առնելով որ վերոհիշյալ գումարը նախատեսված էր Գ. Նժդեհի փողոցի ուղետարի վերականգնման-ամրացման աշխատանքների իրականացման համար և արդեն ամբողջությամբ վերադարձվել է ՀՀ պետական բյուջե, իսկ նշված աշխատանքները նախատեսվել և սկսվել ,ն Երևան քաղաքի 2010 թվականի բյուջով 1,607,776.6 հազ. դրամ արժեքով, ինչպես նաև այն, որ ՀՀ կառավարության 2010 թվականի հուլիսի 22-ի հ. 918-Ն որոշումով ՀՀ պետական բյուջե վերադարձված 239,455.3 դրամը տրամադրվել է Երևան համայնքին որպես սուբվենցիա նույն նպատակի համար, սույն որոշման նախագծով առաջարկվում է Երևանի 2010 թվականի բյուջեում փոփոխություն կատարել՝ համապատասխան չափով ավելացնելով բյուջեի եկամուտներն ու ծախսերը՝ ծախսային մասը նախատեսելով պահուստային ֆոնդում:

Ելնելով վերոգրյալից՝ առաջարկվում է Երևան քաղաքի ավագանու 2009 թվականի դեկտեմբերի 23-ի <<Երևան քաղաքի 2010 թվականի բյուջեի մասին>> N 56-Ն որոշման մեջ կատարել համապատասխան փոփոխություններ:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Գ. ԲԵԳԼԱՐՅԱՆ

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

«ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2009 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 23-Ի N 56-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

«Երևան քաղաքի 2009 թվականի դեկտեմբերի 23-ի N 56-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագծի ընդունման առնչությամբ այլ իրավական ակտերի ընդունման կամ փոփոխության անհրաժեշտություն չի առաջանում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Գ. ԲԵԳԼԱՐՅԱՆ

Հավելված N 1
Երևան քաղաքի ավագանու
2010 թվականի ---------- --ի
N ———Ն որոշման

ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2009 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 23-Ի N 56-Ն ՈՐՈՇՄԱՆ N 1 ՀԱՎԵԼՎԱԾՈՒՄ ԿԱՏԱՐՎՈՂ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

(հազար դրամներով)

Տողի NN	Եկամտատեսակները	Հոդվածի NN	Ընդամենը	այդ թվում՝ (ավելացումները նշված են դրական նշանով, իսկ նվազեցումները փակագծերում)	
				վարչական մաս	ֆոնդային մաս
1	2	3	4	5	6
1000	**ԸՆԴԱՄԵՆԸ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ**		**239 455,3**	**-**	**239 455,3**
	այդ թվում՝				
1200	**2. ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԴՐԱՄԱՇՆՈՐՀՆԵՐ**	**7300**	**239 455,3**	**-**	**239 455,3**
	այդ թվում՝				
1260	**2.6 Կապիտալ ներքին պաշտոնական դրամաշնորհներ՝ ստացված կառավարման այլ մակարդակներից**	**7332**	**239 455,3**	**-**	**239 455,3**
	այդ թվում՝				
1261	ա) Պետական բյուջեից կապիտալ ծախսերի ֆինանսավորման նպատակային հատկացումներ (սուբվենցիաներ)		239 455,3	-	239 455,3

Հավելված N 2
Երևանի քաղաքի ավագանու
2010 թվականի -------- -----ի
N ---- – Ն որոշման

ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2009 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 23-Ի N 56-Ն ՈՐՈՇՄԱՆ N 2 ՀԱՎԵԼՎԱԾՈՒՄ ԿԱՏԱՐՎՈՂ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

(հազար դրամներով)

Տողի NN	Բաժին	Խումբ	Դաս	Բյուջետային ծախսերի գործառական դասակարգման բաժինների, խմբերի և դասերի անվանումները	Ընդամենը	այդ թվում՝ (ավելացումները նշված են դրական նշանով, իսկ նվազեցումները փակագծերում)	
						վարչական բյուջե	ֆոնդային բյուջե
1	2	3	4	5	6	7	8
				ԸՆԴԱՄԵՆԸ ԾԱԽՍԵՐ	**239 455,3**	**-**	**239 455,3**
3100	**11**	**0**	**0**	ՀԻՄՆԱԿԱՆ ԲԱԺԻՆՆԵՐԻՆ ՉԴԱՍՎՈՂ ՊԱՀՈՒՍՏԱՅԻՆ ՖՈՆԴԵՐ	**239 455,3**	**-**	**239 455,3**
				այդ թվում՝			
3110	11	1	0	***ՀՀ կառավարության և համայնքների պահուստային ֆոնդ***	**239 455,3**	**-**	**239 455,3**
				որից՝			
3112	11	1	2	ՀՀ համայնքների պահուստային ֆոնդ	239 455,3	-	239 455,3

Հավելված N 3
Երևանի քաղաքի ավագանու
2010 թվականի ----------ի
N ----- – Ն որոշման

ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2009 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 23-Ի N 56-Ն ՈՐՈՇՄԱՆ N 3 ՀԱՎԵԼՎԱԾՈՒՄ ԿԱՏԱՐՎՈՂ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

(հազար դրամներով)

Տողի NN	Բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման հոդվածների անվանումները	NN	Ընդամենը	այդ թվում՝ (ավելացումները նշված են դրական նշանով, իսկ նվազեցումները փակագծերում)	
				վարչական բյուջե	ֆոնդային բյուջե
1	2	3	4	5	6
4000	ԸՆԴԱՄԵՆԸ ԾԱԽՍԵՐ		**239 455,3**	**-**	**239 455,3**
	այդ թվում՝				
4050	Ա. ԸՆԹԱՑԻԿ ԾԱԽՍԵՐ[a]	x	**239 455,3**	**-**	**239 455,3**
	այդ թվում՝				
4700	*1.7 ԱՅԼ ԾԱԽՍԵՐ*	x	**239 455,3**	**-**	**239 455,3**
	այդ թվում՝				
4770	*ՊԱՀՈՒՍՏԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐ*	x	**239 455,3**	**-**	**239 455,3**
	որից՝				
4771	**-Պահուստային միջոցներ**	**4891**	239 455,3	-	239 455,3

Հավելված N 4
Երևանի քաղաքի ավագանու
2010 թվականի ----------ի
N ------ – Ն որոշման

ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2009 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 23-Ի N 56-Ն ՈՐՈՇՄԱՆ N 6 ՀԱՎԵԼՎԱԾՈՒՄ ԿԱՏԱՐՎՈՂ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

(հազար դրամներով)

Տողի NN	Բաժին	Խումբ	Դաս	Բյուջետային ծախսերի գործառական դասակարգման բաժինների, խմբերի և դասերի, ինչպես նաև բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման հոդվածների անվանումները	Հոդված NN	Ընդամենը	այդ թվում՝ (ավելացումները նշված են դրական նշանով, իսկ նվազեցումները փակագծերում)	
							վարչական բյուջե	ֆոնդային բյուջե
1	2	3	4	5	6	7	8	9
				ԸՆԴԱՄԵՆԸ ԾԱԽՍԵՐ		**239 455,3**	**-**	**239 455,3**
3100	**11**	**0**	**0**	**ՀԻՄՆԱԿԱՆ ԲԱԺԻՆՆԵՐԻՆ ՉԴԱՍՎՈՂ ՊԱՀՈՒՍՏԱՅԻՆ ՖՈՆԴԵՐ**		**239 455,3**	**-**	**239 455,3**
				այդ թվում՝				
3110	11	1	0	***ՀՀ կառավարության և համայնքների պահուստային ֆոնդ***		**239 455,3**	**-**	**239 455,3**
				որից՝				
3112	11	1	2	ՀՀ համայնքների պահուստային ֆոնդ		**239 455,3**	**-**	**239 455,3**
				որից՝				
				–Պահուստային միջոցներ	4891	239 455,3	-	239 455,3

Հավելված N 5
Երևանի քաղաքի ավագանու
2010 թվականի ----------ի
N ----- – Ն որոշման

ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2009 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 23-Ի N 56-Ն ՈՐՈՇՄԱՆ N 7 ՀԱՎԵԼՎԱԾԻ N 1
ԱՂՅՈՒՍԱԿՈՒՄ ԿԱՏԱՐՎՈՂ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

(հազար դրամներով)

Տողի NN	Բաժին	Խումբ	Դաս	Բյուջետային ծախսերի գործառական դասակարգման բաժինների, խմբերի և դասերի, ինչպես նաև բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման հոդվածների անվանումները	Հոդված NN	Ընդամենը	այդ թվում՝ (ավելացումները նշված են դրական նշանով, իսկ նվազեցումները փակագծերում)	
							վարչական բյուջե	ֆոնդային բյուջե
1	2	3	4	5	6	7	8	9
				ԸՆԴԱՄԵՆԸ ԾԱԽՍԵՐ		**239 455,3**	**-**	**239 455,3**
3100	**11**	**0**	**0**	ՀԻՄՆԱԿԱՆ ԲԱԺԻՆՆԵՐԻՆ ՉԴԱՍՎՈՂ ՊԱՀՈՒՍՏԱՅԻՆ ՖՈՆԴԵՐ		**239 455,3**	**-**	**239 455,3**
				այդ թվում՝				
3110	11	1	0	***ՀՀ կառավարության և համայնքների պահուստային ֆոնդ***		**239 455,3**	**-**	**239 455,3**
				որից՝				
3112	11	1	2	ՀՀ համայնքների պահուստային ֆոնդ		239 455,3	-	239 455,3
				այդ թվում՝				
				–Պահուստային միջոցներ	4891	239 455,3		239 455,3